

## «ԹԱՐԳՄԱՆՉԱԿԱՆ ԳՈՐԾ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՐ

1. Կրթական ծրագիրը - 032201.01.6 Թարգմանչական գործ (անգլերեն և հայերեն)
2. Բուհը - Վանաձորի պետական համալսարան (ՎՊՀ)
3. Ծրագիրը հավատարմագրված է – այո
4. Շնորհվող որակավորումը - 023201.00.6 Լեզվաբանություն
5. Ծրագրի մեկնարկի ուսումնական տարին – 2023-2024
6. Ուսումնառության լեզուն - Անգլերեն/Հայերեն
7. Ուսուցման ձևը - Առկա
8. Ծրագրի ընդունելության չափանիշները/պահանջները

Ծրագրի ընդունելությունն իրականացվում է ըստ «ՀՀ պետական և ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունելության (ըստ բակալավրի կրթական ծրագրի) կարգ»-ի, ՀՀ կառավարության որոշում ( 26 ապրիլի 2012 թվականի N 597 –Ն): Տվյալ մասնագիտության շրջանակներում ընդունելությունն անցկացվում է ըստ հետևյալ ընդունելության քննությունների արդյունքների՝ Հայոց լեզու (գրավոր) և Անգլերեն լեզու (գրավոր):

### 9. Ծրագրի նպատակները

Ծրագրի նպատակն է.

- ✓ զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները՝ տրամադրելով խորացված ուսուցում թարգմանաբանության ոլորտում,
- ✓ տրամադրել տեսական և գործնական գիտելիքներ՝ թարգմանաբանության ժամանակակից մեթոդները, հիմնախնդիրները հասկանալու, մեկնաբանելու և վերլուծելու համար,
- ✓ հաղորդել ուսանողներին տարբեր մասնագիտական բնագավառներում թարգմանչական համապատասխան գործունեություն ծավալելու և որակյալ թարգմանություն կատարելու գործնական հմտություններ:

### 10. Ծրագրի կրթական վերջնարդյունքները

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Ա1. Ներկայացնելու լեզվաբանության և թարգմանաբանության արդիական հիմնախնդիրները, սկզբունքները և ժամանակակից տեսությունները,

Ա2. նկարագրելու և տարբերակելու գոյություն ունեցող ժամանակակից թարգմանաբանական մեթոդները,

Ա3. ուսումնասիրելու թարգմանչական գործընթացի հիմնական փուլերը և առանձնահատկությունները,

Ա4. տարբերակելու աղբյուր տեքստի կառուցվածքային և լեզվական առանձնահատկությունները,

Ա5. սահմանելու թիրախ տեքստի ձևակերպման կանոններն ու սկզբունքները,

Ա6. ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում թարգմանաբանության ոլորտի տարատեսակ հիմնախնդիրների ուսուցման գործընթացում,

Ա7. քննարկելու թարգմանաբանության ոլորտի խնդիրներն ու հիմնահարցերը:

Բ. Գործնական մասնագիտական կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Բ1. իրականացնելու ընդհանուր ուղղվածության և նեղ մասնագիտական տեքստերի թարգմանություն,

Բ2. լուծում տալու թարգմանական տարբեր խնդիրներին՝ կատարելով համարժեքների ճիշտ ընտրություն,

Բ3. կատարելու միջտեքստային գուգադրական ուսումնասիրություններ և վերլուծություններ,

Բ4. վերլուծելու սկզբնաղբյուր տեքստի բառային, քերականական և ոճական առանձնահատկությունները և համարժեքորեն դրանք փոխանցելու թիրախ տեքստում,

Բ5. գործնականում կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները,

Բ6. կատարելու ինքնուրույն հետազոտական աշխատանք թարգմանաբանության ոլորտում,

Բ7. օգտագործելու և համադրելու լեզվական տարբեր ռեսուրսներից (բազմաբնույթ տեքստերի, բառարանների հնչյունական, բառային, տերմինաբանական տվյալների բազա) ստացված տվյալները թարգմանաբանական քննության նպատակով:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Այս ծրագրի ավարտին ուսանողն ունակ կլինի.

Գ1. օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, լեզվաբանական կորպուսներ, գիտական հոդվածներ),

Գ2. վերլուծելու մասնագիտական փաստեր և կատարել հետևություններ,

Գ3. քննադատաբար վերլուծելու, համադրելու և համակարգելու գիտական/մասնագիտական տեղեկատվությունը, առաջադրելու հետազոտական նպատակներ և ընտրելու առաջադրված մասնագիտական խնդիրների լուծման օպտիմալ ձևեր,

Գ4. ստեղծագործաբար կիրառելու և զարգացնելու առկա գիտելիքները:

#### 11. Գնահատման ձևերը

Ելնելով կրթական ծրագրի ուսումնական պլանով նախատեսված դասընթացների աշխատածավալից, պարապմունքի ձևից, դասավանդման մեթոդներից՝ դասընթացներն ըստ գնահատման ձևի բաժանվում են 4 խմբի՝

1. ստուգարքային (միայն եզրափակիչ ստուգարք),

2. առանց եզրափակիչ գնահատման (2 ընթացիկ քննություն),

3. առանց ընթացիկ գնահատման (միայն եզրափակիչ քննություն),

4. եզրափակիչ գնահատումով (2 ընթացիկ և 1 եզրափակիչ քննություն):

#### 12. Շրջանավարտների ապագա կարիերայի հնարավորությունները

Որակյալ թարգմանիչների պահանջարկը հանրապետությունում մեծ է և աշխատանքի տեղավորման հնարավորությունները նույալես բազմազան են: Սույն ծրագրի ավարտին ուսանողը կունենա ամբողջական և խոր գիտելիքներ թարգմանաբանության ոլորտում, ունակ կլինի կատարել գրավոր և բանավոր թարգմանություններ տարբեր մասնագիտական ոլորտներում, ինչը զգալիորեն կխթանի մրցունակությունն աշխատաշուկայում:

#### 13. Ուսումնառության օժանդակության ռեսուրսները և ձևերը

Ծրագրի իրականացման համար ուսումնական ստորաբաժանումում առկա են անհրաժեշտ ուսումնական տարածքներ և գիտակրթական անհրաժեշտ սարքավորումներ: Ֆակուլտետի տարածքը բավարար է վերոնշյալ դասընթացների համար: Ստորաբաժանումում առկա համակարգչային բազան (համակարգչային

լսարան, պրոյեկտոր, հեռուստացույց, DVD նվագարկիչ) ընդհանուր առմամբ բավարար է ծրագրի իրականացման համար: Սակայն տվյալ մասնագիտության ուսուցման կազմակերպման համար խիստ անհրաժեշտ է համապատասխան սարքավորումներով մասնագիտական լսարանի ստեղծումը, որը թույլ կտա պատրաստել համընթաց և հետևողական թարգմանիչներ: Ծրագիրն իրականացնող ուսումնական ստորաբաժանումում առկա է համապատասխան գրականություն, իսկ նոր նյութերի (տպագիր և էլեկտրոնային) ձեռքբերումն ու մշակումը իրականացվելու է ծրագրում ընդգրկված դասախոսական կազմի միջոցով:

#### **14. Լրացուցիչ տեղեկատվություն ծրագրի վերաբերյալ**

Ընդհանրական կարողություններ

Դասավանդման/մանկավարժական

- ✓ Դասընթացի ուսումնամեթոդական ծրագիր կազմելու հմտություն,
- ✓ Լսարանն արդյունավետ կառավարելու կարողություն,
- ✓ Կրթական նորագույն տեխնոլոգիաների տիրապետում և կիրառում,
- ✓ Դասավանդման ինտերակտիվ մեթոդների կիրառման կարողություն,
- ✓ Համագործակցային ուսուցման սկզբունքների որդեգրում,
- ✓ Տեսական և գործնական հմտությունները համադրելու և մատուցելու կարողություն:

Հետազոտական

- ✓ Տեսական և էմպիրիկ գիտահետազոտական աշխատանքի իրականացման կարողություն,
- ✓ Տպագիր և առցանց գիտական աղբյուրներից օգտվելու հմտություն,
- ✓ Գիտական խոսույթի բովանդակային վերլուծության կարողություն,
- ✓ Գիտական տեքստերի լեզվառճական առանձնահատկությունների տիրապետում և վերլուծության կարողություն,
- ✓ Գիտական աշխատանքները խմբագրելու և դեկավարելու կարողություն
- ✓ Հաղորդակցման
- ✓ Լսարանի հետ հաղորդակցվելու հմտություն,
- ✓ Համագործակցային և մասնակցային, ուսանողակենտրոն հաղորդակցման կարողություն:

ՏՀՏ կիրառություն

- ✓ Բազային համակարգչային (MS Office փաթեթի ազատ տիրապետում՝ Word, Excel, Power-Point)
- ✓ հմտություններ,
- ✓ Սոցիալական հարթակներից օգտվելու հմտություն,
- ✓ Օնլայն խմբերի կառավարում,
- ✓ Լուսացուցադրությունների ստեղծման կարողություն,
- ✓ Թվային տեխնոլոգիաների կիրառման հմտություն:

Այլ կարողություններ

- ✓ Մասնագիտական էթիկայի և իրավական նորմերի իմացություն հաղորդակցությունների ոլորտում,
- ✓ Անհրաժեշտ ռեսուրսները գնահատելու և ծրագրերն արդյունավետորեն իրականացնելու կարողություն,
- ✓ Ժամանակի պլանավորման և կառավարման կարողություն:

**Մասնագիտական կարողություններ**

- ✓ Թարգմանաբանության ոլորտում գիտական ուսումնասիրություններ իրականացնելու կարողություն
- ✓ Թարգմանաբանության արդիական հիմնախնդիրների և ժամանակակից մեթոդների մասին իմացություն,
- ✓ Տեղեկատվական տեխնոլոգիաներին տիրապետելու և դրանք մատուցելու կարողություն,
- ✓ Օտար լեզվով (ֆրանսերեն, անգլերեն) բանավոր հաղորդումներ, փաստաթղթեր կազմելու և թարգմանելու կարողություններ,
- ✓ Թարգմանաբանության և հաղորդակցության ժամանակակից տեսությունների հիմնադրությունները ներկայացնելու կարողություն,
- ✓ Մասնագիտական փաստերի վերլուծություն և հետևություններ անելու կարողություն
- ✓ Թարգմանաբանության դասավանդման նորագույն մեթոդներն ու տեխնոլոգիաները լսարանին մատուցելու կարողություն

### **Ծրագրի կրթական վերջնարդյունքները**

Ա. Մասնագիտական գիտելիք և իմացություն Բ.Գործնական մասնագիտական կարողություններ

Ա1 ներկայացնելու լեզվաբանության և թարգմանաբանության արդիական հիմնախնդիրները, սկզբունքները և ժամանակակից տեսությունները

Բ1 իրականացնելու ընդհանուր ուղղվածության և նեղ մասնագիտական տեքստերի թարգմանություն,

Ա2 նկարագրելու և տարբերակելու գոյություն ունեցող ժամանակակից թարգմանաբանական մեթոդները

Բ2 լուծում տալու թարգմանական տարբեր խնդիրներին՝ կատարելով համարժեքների ճիշտ ընտրություն

Ա3 ուսումնասիրելու թարգմանչական գործընթացի հիմնական փուլերը և առանձնահատկությունները,

Բ3 կատարելու միջտեքստային զուգադրական ուսումնասիրություններ և վերլուծություններ,

Ա4 տարբերակելու աղբյուր տեքստի կառուցվածքային և լեզվական առանձնահատկությունները,

Բ4 վերլուծելու սկզբնաղբյուր տեքստի բառային, քերականական և ոճական առանձնահատկությունները և համարժեքորեն դրանք փոխանցելու թիրախ տեքստում,

Ա5 սահմանելու թիրախ տեքստի ձևակերպման կանոններն ու սկզբունքները

Բ5 գործնականում կիրառելու ձեռք բերված տեսական գիտելիքները

Ա6 ցուցաբերելու ստեղծագործական մոտեցում թարգմանաբանության ոլորտի տարատեսակ հիմնախնդիրների ուսուցման գործընթացում

Բ6 կատարելու ինքնուրույն հետազոտական աշխատանք թարգմանաբանության ոլորտում

Ա7 քննարկելու թարգմանաբանության ոլորտի խնդիրներն ու հիմնահարցերը

Բ7 օգտագործելու և համադրելու լեզվական տարբեր ռեսուրսներից (բազմաբնույթ տեքստերի, բառարանների հնչյունական, բառային, տերմինաբանական

տվյալների բազա) ստացված տվյալները թարգմանաբանական քննության նպատակով:

Գ. Ընդհանրական (փոխանցելի) կարողություններ

Գ1 օգտվելու տեղեկատվության տարատեսակ աղբյուրներից (ինտերնետ ռեսուրսներ, էլեկտրոնային գրադարաններ, լեզվաբանական կորպուսներ, գիտական հոդվածներ),

Գ3 քննադատաբար վերլուծելու, համադրելու և համակարգելու գիտական/մասնագիտական տեղեկատվությունը, առաջադրելու հետազոտական նպատակներ և ընտրելու առաջադրված մասնագիտական խնդիրների լուծման օպտիմալ ձևեր

Գ2 վերլուծելու մասնագիտական փաստեր և կատարելու հետևություններ Գ4 տեղեկագործաբար կիրառելու և զարգացնելու առկա գիտելիքները